

ՂԱՐԱՔԱՂԻ ՄԱՐԶԻ ՏԱԳՆԱՊԸ

ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒԱԾ

Ղարաքաղի Մարզի գլխավոր քաղաք Ստեփանակերտի մէջ գործադուլի վերսկսումով եւ ֆետրուարին Հայաստանի մէջ հիմնուած Ղարաքաղի կոմիտէին իշխանութեան ուղղած պահանջով կազմելու «Հայկական Ազգային Շարժում» մը, կրկին վերաբարձարձեցին Ղարաքաղեան տաղնասլը: Ղարաքաղի կոմիտէն կը պահանջէ այս շարժումին ստեղծումը, որպէսզի ան կարենայ հետապնդել հայկական պահանջները, որոնք զբեւոյրուեցան երեւանեան ցոյցերու ընթացքին:

Ղարաքաղի Մարզի հայերը, որոնք երեք-չորրորդը կը կազմեն Ատրպէյճանի հողատարութեան տակ դռնուող այդ հողամասին բնակչութեան, 25 Յուլիսին վերջ տուած էին երկուամիս տեւած իրենց գործադուլին, առանց գոհացում ստանալու իրենց գլխավոր պահանջին՝ Ղարաքաղի Մարզին կցումը հայրենիքին: Չորեքշաբթի գիշեր նոր միթինկ մը տեղի ունեցաւ երեւանի մէջ, որ որոշեց Ուրբաթի համար նոր գործադուլ մը յայտարարել, զօրավիզ կանգնելու համար Ղարաքաղի Մարզի հայերուն կողմէ ներկայացուած վեց պահանջներուն:

Ղարաքաղի կոմիտէին կոչին ընդառաջելով Երեւանի Օսերայի հրատարակին վրայ Սեպտեմբերին տեղի ունեցան երեք միթինկներ, որոնց իւրաքանչիւրին մասնակցած են մօտ 100,000 հայեր: Ստեփանակերտի գործադուլաւորներուն գլխավոր պահանջներէն է այն, որ Հայաստանէն դաղթած 2000 ազերիներ հաստատուին Ղարաքաղի Մարզէն տարբեր վայրի մը մէջ, մինչդեռ այդ դաղթածները ներկայիս հաստատուած են Ղարաքաղի մէջ:

Հայերը այս արտադաղթածները կը նկատեն «կեղծ դաղթականներ», որոնք ատրպէյճանական իշխանութեանց թելադրութեամբ հաստատուած են Ղարաքաղի Մարզին մէջ, ինչպէս զային Միութեան մէջ 1989ին կատարուելիք մարդահամարին ազերիներու թիւը աւելցնելու մտադրութեամբ: Ղարաքաղի կուսակցական ղեկավարութիւնը յարմար տեսած էր անոնց այլուր հաստատումը, բայց այս որոշումը անտեսուած էր ատրպէյճանական կառավարութեան կողմէ:

Ստեփանակերտի գործադուլաւորները կը պահանջեն նաեւ անմիջապէս դադրեցնել իրենց հիմնարկներու տնտեսական գործունէութեան վրայ դրուած խիստ հակակշիռը, զորս ուղղուած կը նկատեն հիմնարկներու պատասխանատուներուն դէմ, որովհետեւ այդ նոյն պատասխանատուներն են ղեկավարները Ղարաքաղը Հայաստանին՝ կցուելու պահանջատիրական շարժումին:

Անոնք կը պահանջեն նաեւ Ղարաքաղի Մարզի դատախազ Վասիլենքոյի այլուր փոխադրութիւնը, Ստեփանակերտի բնակիչներուն դէմ ձեռք առնուած հետապնդումներուն դադրեցումը, բնակիչներ՝ երկու տնօրէն եւ երկու աշխատաւորներ, որոնք ամբաստանուեցան զէնքեր պատրաստելու յանցանքով: Գործադուլաւորները կը պահանջեն նոր բանտի մը կառուցումը Ստեփանակերտի մէջ, բայց մինչեւ անոր աւարտը հայ բանտարկեալները պէտք չէ պահուին ազերիներու հակակշիռն ենթակայ վայրերու մէջ:

Ստեփանակերտի վերջին գործադուլը որոշուեցաւ կիրակի օր տեղի ունեցած միթինկի մը ընթացքին, որուն մասնակցեցան մօտ 30 հազար հոգի: Ղարաքաղի կոմիտէն հաղորդագրութեամբ մը կը յայտնէ թէ ներկայիս կը հետապնդէ միայն կարճատեւ ժամանակի մէջ իրագործելի նպատակներ, բայց ասպագային կըրնայ հետապնդել ժողովուրդին կողմէ առաջարկուելիք այլ պահանջներ եւս: Առ այժմ կը պահանջէ ամբաստնումը «Ղարաքաղի Հանրապետութեան» գերիշխանութեան, Պալթեան երկիրներու հանրապետութիւններու օրինակով: